ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«20» դեկտեմբերի 2017 թվականի № 156-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի նոյեմբերի 10-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-98 և 2017 թվականի հոկտեմբերի 05-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2274 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Ֆ-342/17 գրությունը, «ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 20 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 4 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/574 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հյուսիսային տեղամաս (այսուհետ՝ ընդերքի տեղամաս)՝ 1.X=4464060. Y=8422960, 2.X=4464340 Y=8423027, 3.X=4464511 Y=8423036, 4.X=4464511 Y=8423071, 5.X=4464483 Y=8423113, 6.X=4464432 Y=8423132, 7.X=4464385 Y=8423125, 8.X=4464311 Y=8423232, 9.X=4464300 Y=8423237, 10.X=4464248 Y=8423221, 11.X=4464222 Y=8423224, 12.X=4464085 Y=8423224, 13.X=4464104 Y=8423171, 14.X=4464091 Y=8423061 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 337.5 հազ.մ^3 ավազակոպճային խառնուրդի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-574 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4464068 Y=8422934 H=1245.0(h=0), 2.X=4464278 Y=8422934 H=1253.0(h=0), 3.X=4464488 Y=8422980

H=1262.8(h=0), 4.X=4464530 Y=8423034 H=1259.0(h=0), 5.X=4464530 Y=8423060 H=1256.0(h=0,) 6.X=4464483 Y=8423113 H=1254.0(h=-0.6), 7.X=4464432 Y=8423132 H=1252.0(h=-9.8), 8.X=4464385 Y=8423125 H=1250.0(h=-7.8), 9.X=4464311 Y=8423232 H=1245.0(h=-1.6), 10.X=4464300 Y=8423237 H=1244.0(h=-0.6), 11.X=4464248 Y=8423221 H=1242.5(h=-6.7), 12.X=4464222 Y=8423224 H=1241.5(h=-5.7),13.X=4464085 Y=8423224 H=1235.0(h=-3.7), 14.X=4464014 Y=8423238 H=1237.8(h=0), 15.X=4464008 Y=8423162 H=1238.3(h=0), 16.X=4464044 Y=8422960 H=1242.1(h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 12.0 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 84375 մ^3 տուֆի մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 574 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հյուսիսային տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-574 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ